Հանրակրթությունից բարձրագույն կրթություն անցումային շրջանի դժվարություններ և հաղթահարման ուղիներ

/12-րդ դասարանում ուսումնական գործընթացի կազմակերպման քաղաքականության համատեքստում/

Միշա Թադևոսյան

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում:

Հոդվածում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Միշա Թադևոսյան

Email: mishavtadevosyan@gmail.com

Հեռ.: +374 98 82 89 06

FB էջ.: https://www.facebook.com/MishaTadevosyan

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բովանդակություն
2. Երախտագիտության խոսք
3. Հետազոտության մասին
4. Հետազոտության նպատակ, խնդիրներ, մեթոդաբանություն
5. Հետազոտության արդյունքներ
6. Եզրակացություններ և առաջարկություններ
7. Հավելված: Հետազոտության գործիքներ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Հեղինակն իր շնորհակալությունն է հայտնում Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի թիմին համահունչ հետազոտությունը իրականացնելու հնարավորություն ընձեռելու համար:

Հեղինակը հայտնում է իր երախտագիտությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների, հանրակրթական ուսումնական հաստատությունների վարչական և ղեկավար անձնակազմի ներկայացուցիչներին, հետազոտության մասնակից ուսանողներին և աշակերտներին՝ իրենց ժամանակի և աջակցության համար, ովքեր հնարավոր դարձրին այս հետազոտության արդյունավետ իրականացումը:

Սույն զեկույցի բովանդակության պատասխանատվությունը հեղինակինն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել և ներկայացնել հանրակրթությունից բարձրագույն կրթություն անցումային շրջանում առկա դժվարությունները, խոչընդոտները՝ ավագ դպրոցի, մասնավորապես, 12-րդ դասարանում ուսումնական գործընթացի կազմակերպման քաղաքականության համատեքստում:

Ելնելով հետազոտության նպատակից, առանձնացվել են խնդիրների երկու խումբ.

Ա) Ուսումնասիրել և վերլուծել հանրակրթությունից բարձրագույն կրթության անցումային շրջանի դժվարությունները՝ ավագ դպրոցի 12-րդ դասարանի ուսումնական գործընթացի կազմակերպման քաղաքականության համատեքստում՝ անդրադառնալով, մասնավորապես, հետևյալ հարցերին.

1) Որքանո՞վ է 12-րդ դասարանի ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգը նպաստել կրկնուսույցների դերի նվազմանը,
2) Ի՞նչ ազդեցություն, հետևանքներ է ունենում 12-րդ դասարանում ուսումնական գործընթացի կազմակերպման պրակտիկան /առարկայական բեռնաթափումը/ սովորողների ուսումնական մոտիվացիայի, կրթության նկատմամբ վերաբերմունքի, ինչպես նաև ոչ քննական առարկաների նկատմամբ վերաբերմունքի վրա,

Բ) Ուսումնասիրել ավագ դպրոցի 12-րդ դասարանի ուսումնական գործընթացի կազմակերպման քաղաքականության արդյունավետությունը՝ աշակերտների նախամասնագիտական կողմնորոշման, ինքնուրույն կյանք վարելու պատրաստվածության հմտությունների ձեռքբերման[1], հետագա ուսումնառության հաջողության հասնելուն ուղղված աշխատանքների իրականացման համատեքստում՝ անդրադառնալով,մասնավորապես, հետևյալ հարցերին.

1) Ինչպիսի՞ն է ավագ դպրոցում ակնկալվող արդյունքների ձեռքբերման ուղղված գործընթացի իրականացման պրակտիկան (հետագա ուսումնառության հաջողություն, մասնագիտական կողմնորոշում, ինքնուրույն կյանք վարելու պատրաստվածության հմտությունների ձեռքբերում),
2) ի՞նչ աշխատանքներ են իրականացվել 12-րդ դասարանում սովորողների մասնագիտական կողմնորոշման, կրթության շարունակականության ապահովման, ինքնուրույն կյանք վարելու պատրաստվածության հմտությունների ձեռքբերման ուղղությամբ:

[1] «Ինքնուրույն կյանք վարելու պատրաստվածություն/նախապատրաստում» արտահայտությունը արձանագրված է կրթության քաղաքականության մի շարք փաստաթղթերում, օրինակ՝ «Կրթության մասին» ՀՀ օրենք (Հոդված 18,կետ 1), «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիր» (Բաժին 3, Ավագ դպրոցի առաքելություն), «Հանրակրթության պետական կրթակարգ», (Բաժին 3, Հանրակրթության նպատակները եվ բարեփոխումների ռազմավարությունը), սակայն մանրամասն ձևակերպում/բնութագրում/ բացատրություն այս արտահայտությանը առկա չէ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ, ԽՆԴԻՐՆԵՐ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թիրախ խմբում ընգրկվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների, մասնավորապես, ավագ դպրոցների աշակերտներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների 1-ին կուրսի ուսանողներ:

Հետազոտության շրջանակում թիրախ խմբում աշակերտների և ուսանողների ընդգրկումը հնարավորության է ընձեռում հիմնախնդիրը դիտարկել միառժամանակ երկու կողմից՝ և գործընթացքային, և վերջնարդյունքային համատեքստում:

Հետազոտության ընթացքում իրականացվել են ուսանողների հարցում և աշակերտների մասնակցությամբ ֆոկուս խմբային քննարկումներ:

Ելնելով հետազոտական նպատակից և խնդիրներից՝ հետազոտության շրջանակում կիրառվել են տեղեկատվության ստացման հետևյալ մեթոդները:

Ուսանողների հարցում

Հետազոտության շրջանակում իրականացվել է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների թվով 120 ուսանողի (4 բուհ, որից՝ 2-ը մարզային) հարցում: Հետազոտությունը չի կրում ներկայացուցչական բնույթ, սակայն հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու մի քանի հարցադրումների մասին: Ուսանողական ընտրակազմում ներառված ուսանողները եղել են հետևյալ ուսումնական հաստատություններից.

-Երևանի պետական համալսարան(ԵՊՀ)
-Հայկական պետական մանկավարժական համալսարան(ՀՊՄՀ)
-Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան
-Գորիսի պետական համալսարան:

Ուսանողների ընտրությունը

Հետազոտության մասնակից ուսանողները հանդիսացել են համապատասխան ուսումնական հաստատությունների 1-ին կուրսի ուսանողներ, ովքեր նախորդ տարում (2016-17ուս. տարի), համաձայն օրինակելի ուսումնական պլանների, համապատասխանաբար իրենք են ընտրել 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում ուսումնասիրության համար առարկաներ: Հետազոտության մասնակից 1-ին կուրսի ուսանողների ընտրության հիմքում ընկած է պարզ պատահականության սկզբունքը:

Աշակերտների մասնակցությամբ ֆոկուս խմբային քննարկում

Հետազոտության ընթացքում իրականացվել են 2 ֆոկուս խմբային քննարկում ավագ դպրոցների 12-րդ դասարանի թվով 20 աշակերտի մասնակցությամբ: Ֆոկուս խմբային քննարկման առաջին խմբի մասնակից են եղել միայն Երևան քաղաքի ավագ դպրոցների աշակերտներ, իսկ երկրորդ խմբում՝ միայն մարզային ավագ դպրոցների աշակերտներ: Երևանում աշակերտների ֆոկուս խմբում ընդգրկվել են «Ջինիշյան հիշատակի հիմնադրամ»-ի ավագ դպրոցականների բանավեճի ակումբի աշակերտներ (1 խումբ, 3 ավագ դպրոցից, պարզ պատահականության սկզբունքով), Գյումրի քաղաքում՝ դպրոցներ, որոնք ունեն ավագ դպրոցական ծրագիր (թվով 5 դպրոց, յուրաքանչյուրից 2-

ական աշակերտ, պարզ պատահականության սկզբունքով: Հետազոտության ընթացքում պահպանվել է հետազոտության մասնակից ուսանողների ու աշակերտների անձնական տվյալների գաղտնիության ապահովման սկզբունքը:

Գործիքի մշակում

Հետազոտության մասնակից ուսանողների համար կազմվել է համապատասխան հարցաթերթիկ, իսկ աշակերտների մասնակցությամբ ֆոկուս խմբային քննարկման համար՝ ֆոկուս խմբային քննարկման հարցաշար:

Ուսանողների համար նախատեսված հարցաթերթիկը և աշակերտների մասնակցությամբ ֆոկուս խմբային քննարկման հարցաշարը բաղկացած են 3 հիմնական բաժիններից՝ տեղեկատվություն, ընդհանուր հարցեր/հետազոտության նպատակ, խնդիրներ/, իրականացվող աշխատանքներ:

Հետազոտության ընթացքում կիրառված գործիքները ներկայացված են սույն աշխատանքի «Հավելվածներ» բաժնում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում (այդ թվում ավագ դպրոցներում) 12-րդ դասարանում ուսումնական գործընթացի կազմակերպումը կարգավորվում է «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլաններով»: Դեռևս 2006-2012թթ. ընթացքում ՀՀ-ում իրականացվեցին 12-ամյա հանրակրթական համակարգին անցման և եռամյա կրթակարգով առանձին գործող ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրեր, որոնց իրականացման արդյունքում ՀՀ հանրակրթական միջնակարգ դպրոցների մի մասը վերակազմակերպվեց ավագ դպրոցների, որոնք էապես պետք է նպաստեցին դպրոցներում կրթության որակի բարելավմանը:[2]

Ավագ դպրոցների համակարգային ներդրման նպատակով՝ ՀՀ կառավարության 2008թ. մարտի 27-ի թիվ 12 արձանագրային որոշմամբ հաստատվեց «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը»[3]: Ծրագրի ընդունման կարևորությունը հիմնավորվում էր նրանով, որ «ավագ դպրոցը հանդիսանում է «նախամասնագիտական» կրթություն ապահովող հիմնական օղակը, որի գործունեությունից մեծապես կախված է սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշումը և հետագա ուսումնառության հաջողությունը»: Ավագ դպրոցների կարևորությունը արձանագրված է նաև «Հանրակրթության պետական կրթակարգում», որում նշվում է. «ավագ դպրոցը հանրակրթության վերջին օղակն է և պետք է պատրաստի սովորողներին ինքնուրույն կյանքի ու աշխատանքի շուկա մտնելուն»:

[2] http://www.cfep.am/en/supporting-implementation-of-high-school-reform

[3] http://www.irtek.am/views/act.aspx?aid=43290

Վերոնշյալ ռազմավարական ծրագրով հռչակված է նաև «ավագ դպրոցների առաքելությունը»(ՌԾ, բաժին 3), որով նախանշվում են երեք հիմնական ակնկալվող արդյունքներ՝ սովորողներին ինքնուրույն կյանքին նախապատրաստելը, ըստ ընդունակությունների և կարողությունների սովորողների մասնագիտական կողմնորոշումը, հետագա մասնագիտական կրթություն ստանալու համար բավարար հիմքերի ստեղծումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում ավագ դպրոցի 10-ից 12-րդ (առաջին կիսամյակ) դասարաններում աշակերտները ուսուցանում են տվյալ դասարանների ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաները, ըստ երևույթին, վերոնշյալ նպատակների ձեռքբերումը ենթադրում է ավագ դպրոցներում գործունեության իրականացման/քաղաքականության/ այլ մոտեցում՝ համապատասխան ծառայությունների ներդրման, աշխատանքների իրականացման, մասնագետների ներգրավման տեսքով:

Հանրակրթական ուսումնական հաստատությունները համակարգային ներդրված չեն նաև առանձին դասընթացներ, դասաժամեր, արտադասարանային պարապմունքներ՝ ուղղված «ավագ դպրոցների առաքելությամբ նախանշված երեք հիմնական դրույթների/նպատակների (սովորողներին ինքնուրույն կյանքին նախապատրաստելը, ըստ ընդունակությունների և կարողությունների սովորողների մասնագիտական կողմնորոշումը, հետագա մասնագիտական կրթություն ստանալու համար բավարար հիմքերի ստեղծումը) ձեռքբերմանը՝ «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլաններում կատարվել են մի շարք փոփոխություններ՝ ուղղված 12-րդ դասարանում ուսումնական գործընթացի կազմակերպմանը: Իհարկե, սա դեռևս չի ենթադրում, որ նմանօրինակ աշխատանքներ հանրակրթական ուսումնական հաստատություններում չեն իրականացվում ընդհանրապես: Նախանշված նպատակներից, օրինակ, մասնագիտական կողմնորոշման իրականցման գործառույթը ամրագրված է Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրերում[4], օրինակ, հանրակրթական ուսումնական հաստատություններում սոցիալական մանկավարժի պաշտոնային պարտականություններում: ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում (այդ թվում ավագ դպրոցներում) ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում կարգավորվում է «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլաններով»: Այդ նպատակով օրինակելի ուսումնական պլանների 20-րդ բաժնում ներկայացվում է 12-րդ դասարանում ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգը, որը ուսումնասիրվել և հիմք է հանդիսացել սույն հետազոտության շրջանակներում:

---

[4] Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրեր, ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշում

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԿՐԿՆՈՒՍՈՒՅՑՆԵՐԻ ԴԵՐԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ: Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլաններով(բաժին 20, կետ 2) սահմանվում է, որ 12-րդ դասարանի ուսումնական առաջին տարվա (կիսամյակի) ավարտին աշակերտները ընտրում են երկրորդ կիսամյակում ուսումնասիրության համար նախատեսված համապատասխան առարկաներ: Նման քաղաքականության հիմնական նպատակը կրկնուսույցների դերի նվազեցումն է, որի իրագործման մեխանիզմ է հանդիսանում օրինակելի ուսումնական պլաններով սահմանված այն դրույթը, համաձայն որի՝ «12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաներին Հաստատության ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը տրվում է այդ առարկաների ուսումնական նյութի կրկնությանը» (բաժին 20, կետ 5):

> 5) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաներին Հաստատության ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը տրվում է այդ առարկաների ուսումնական նյութի կրկնությանը:
>
> *Օրինակելի ուսումնական պլան բաժին 20, կետ 5*

Ելնելով նախանշված խնդրից՝ հետազոտության շրջանակում փորձ է արվել պարզելու,
-Որքանով են հետազոտության մասնակից ուսանողները և աշակերտները համաձայն 12-րդ դասարանում 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նման մոտեցման հետ, այն է՝ ուսումնական առարկայացանկից սահմանափակ առարկաների ընտրություն և ուսուցում,
-ըստ հետազոտության մասնակիցների՝ ո՞րն է 12-րդ դասարանի ուսումնական գործընթացը կազմակերպման, մասնավորապես, առարկաների ընտրության/ընդհանուր առարկայացանկի բեռնաթափման/ նման մոտեցման նպատակը,
-որքանո՞վ է 12-րդ դասարանի ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգը նպաստել կրկնուսույցների դերի նվազմանը:

Հետազոտության մասնակից հարցվող ուսանողների 90,7%-ը (109ուս.) կողմ է եղել 12-րդ դասարանում 2-րդ կիսամյակի առարկաների բեռնաթափման որոշման հետ, դեմ են արտահայտվել հետազոտության մասնակից ուսանողների 9,3%-ը(11ուս.): Հետազոտության շրջանակում կարևոր էր բացահայտել նաև, թե որոնք են ուսանողների կողմից 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում ուսումնական գործընթացի կազմակերպման նման մոտեցման հետ համաձայնության/անհամաձայնության/ պատճառները.



Հարցվող ուսանողների մեծամասնությունը (37%) (44ուս.) գտնում է, որ 12-րդ դասարանի ուսումնական գործընթացում առարկաների ընտրության/ընդհանուր առարկայացանկի բեռնաթափման/ հիմնական նպատակը ծանրաբեռնվածության նվազեցումն է, և միայն 3%-ն (4ուս.) է նշել, որ նպատակ է հանդիսանում նաև կրկնուսույցի դերի նվազեցումը: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ հարցվող ուսանողների՝

Հաճախել է կրկնուսույցի մոտ (76,5%)	Չի հաճախել (23,5%)

Հարցվող ուսանողների հաճախելիությունը կրկնուսույցի մոտ, միջին տևողությունը

Մինչև 1 տարի (69,1%)	1-ից 2 տարի (23,5%)	2 տարի և ավելի (7,4%)

Աշակերտները, ի տարբերություն հետազոտության մասնակից ուսանողների, որպես 12-րդ դասարանում 3 առարկաների ընտրության/ընդհանուր առարկայացանկի բեռնաթափման/ նման մոտեցման հիմնական պատճառ ներկայացնում էին կրկնուսույցների դերի նվազեցումը: Միևնույն ժամանակ, հետազոտության ֆոկուս խմբային քննարկման մասնակից աշակերտները մեծամասամբ հաճախում էին կրկնուսույցների մոտ (յուրաքաչյուր աշակերտ առնվազն 1 տարի հաճախում էր կրկնուսույցի մոտ հետազոտության իրականացման ժամանակահատվածում):

Հետազոտության մասնակից ուսանողների խմբից փորձել ենք նաև պարզել նաև ավագ դպրոցի 12-րդ դասարանում ուսումնական գործընթացի սույն ընթացակարգով կազմակերպման ազդեցությունը կրկնուսույցների դերի նվազեցման գործում, արդյունքում.







Ինչպես երևում է, հետազոտության մասնակից ուսանողների մեծամասնությունը անբավարար է համարել 12-րդ դասարանի ուսումնական գործընթացի կազմակերպման նմանօրինակ ընթացակարգի ազդեցությունը կրկնուսույցների մոտ հաճախելիության նվազեցման գործընթացի վրա։

7) 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում ուսումնասիրության համար իրենց կողմից ընտրված ուսումնական առարկաների ցանկը Հաստատության սովորողները ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում, մինչև դեկտեմբերի 1-ը գրավոր հայտնում են Հաստատության տնօրենին: Միասնական քննություններ հանձնող սովորողները ցանկում ներառում են նաև միասնական քննական առարկաները:

Օրինակելի ուսումնական պլան բաժին 20, կետ 7

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ: Հետազոտության մասնակից աշակերտները ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ, ինչպես ուսանողները, մեծամասամբ հայտնում էին իրենց համաձայնությունը գործընթացի կազակերպման նման մոտեցման հետ՝ արտահայտելով միառժամանակ մտահոգություններ: Աշակերտների կողմից առավել շատ դիտարկվում և բարձրաձայնվում էին գործընթացի բովանդակային կազմակերպման հետ կապված դժվարություններ ու խոչընդոտներ: Ստորև ներկայացվում է ավագ դպրոցներում 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում ուսումնառության, որդեգրված քաղաքականության արդյունքում(հետևանքով) ի հայտ եկած հիմնախնդիրները.

- Ավագ դպրոցի 12-րդ դասարանում աշակերտները երկրորդ կիսամյակի ուսումնասիրման համար նախատեսված առարկաների ընտրության գործընթացը իրականացնում են մեխանիկորեն՝ ընտրելով և համապատասխանեցնելով այն առարկաներին, որոնք անհրաժեշտ են բուհ ընդունվելու նպատակով, միառժամանակ չունենալով հնարավորություն ընտրելու լրացուցիչ այլ առարկաներ (ըստ օրինակելի ուս. պլանի միայն 3 առարկայի հնարավորություն), որոնք հետաքրքրում են իրենց, ինչը բացասաբար է անդրադառնում սովորողների ուսումնական մոտիվացիայի, կրթության նկատմամբ վերաբերմունքի վրա *(այս մասին առանձին),*
- Աշակերտների մեծամասնությունը գտնում է, որ 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում իրենց կողմից ընտրված առարկաներին տրամադրվող ընդհանուր ժամաքանակը (1 կիսամյակում յուրաքանչյուր դասընթացին տրամադրվող ընդհանուր դասաժամերի քանակը՝ ներառյալ արտադասարանային աշխատանքները) բավարար չէ ավարտական քննություններին նախապատրաստավելու համար: 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում առարկաների ընտրության նմանօրինակ քաղաքականության նպատակը աշակերտների համար տվյալ առարկայի համապարփակ, բովանդակային ուսումնասիրության համար անհրաժեշտ ընդհանուր ծավալով ժամաքանակի ապահովումն է, սակայն մի շարք «այլ» խնդիրների շրջանակերում, որոնց անդրադարձ է կատարվու�նաև այս աշխատանքում, ստացվում է հակառակ պատկերը, այն է՝ անհրաժեշտ դասաժամերի, թեմաների լրացուցիչ ուսումնասիրության, շտեմարանային ավարտական քննություններին նախապատրաստման նպատակով աշակերտներին օգնության են հասնում կրկնուսույցները,

- Պրակտիկայում այն աշակերտները, ովքեր չեն պատրաստվում ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություններ, միանում են այն աշակերտների ընդհանուր խմբերին, ովքեր, համաձայն որդեգրված քաղաքականության, ընտրում են համապատասխան առարկաներ՝ առարկայի համար նախատեսված խմբում թվաքանակ լրացնելու նպատակով: Այս խմբերում ներգրավումը խնդրային է այն աշակերտների համար, ովքեր պատրաստվում են բուհ ընդունվելու համար հանձնել ներբուհական քննություններ (հիմնականում արվեստի, մշակույթի և սպորտի ուղղվածության մասնագիտության ընտրության կատարած աշակերտներ): Վերջիններս հնարավորություն չունեն ընտրելու այլ առարկաներ՝ այդ թվում անհրաժեշտ առարկաներ նախատեսված իրենց կողմից ընտրված մասնագիտության բուհական ընդունելության համար: Դպրոցում ուսուցչական անձնակազմի, դասղեկի միջնորդությամբ աշակերտների այս խմբերը չեն կատարում ինքնուրույն ընտրություն: Այս խմբում առանձնացվում են նաև այն դեպքերը, երբ համապատասխան խմբերի քիչ լինելու պատճառով (առնվազն 5 աշակերտ առկայություն պարագայում է ձևավորվում մեկ խումբ) աշակերտները «ստիպված» միանում են տվյալ դասընթացը ընտրող աշակերտների այլ խմբերի:
- Պայմանավորված այն հանգամանքով, որ մեկ դասարանի միևնույն առարկայի խմբում ներառվում են ինչպես պետական միասնական քննություններ հանձնող, այնպես էլ դպրոցական ավարտական քննություններ հանձնող աշակերտներ, առաջանում են բովանդակային, կազմակերպչական մի շարք խնդիրներ, օրինակ, մեկ դասաժամի շրջանակում ուսուցիչը գործնականում չի կարողանում մատուցել այնպիսի գիտելիքներ, տալ համապատասխան կարողություններ ձևավորող հանձնարարականներ յուրաքանչյուր ուսումնառողի, ցուցաբերել անհատական մոտեցում աշակարտներին, կազմակերպել դասընթացի դասավանդման և ուսումնառության գործընթացը համապատասխան միասնական քննություններ, դպրոցական ավարտական քննություններ հանձնող աշակերտների համար: Արդյունքում՝ միասնական քննություններ հանձնող աշակերտները անհրաժեշտ բացերը լրացնելու համար դիմում են կրկնուսույցի օգնության:
- Աշակերտների մեծամասնությունը ֆոկուս խմբային քննարկման ընթացքում բարձաձայնում էր այն հիմնախնդիրը, որ դպրոցական ծրագրով նախատեսված բովանդակությունը չի համապատասխանում, չի կարողանում ապահովել գիտելիքների ու կարողությունների այն բազան, որն անհրաժեշտ է միասնական քննություններ հանձնելու համար՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում անցում կատարելու նպատակով:Այս հիմնախնդիրը ունի համակարգային մի շարք այլ շղթայական հիմնախնդիրներ, որոնց շուրջ անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություններ:
- Աշակերտներից շատերը, որպես գործընթացի կազմակերպման դժվարություն դիտարկում էին նաև այն հանգամանքը, որ մեկ առարկայի շրջանակում միառժամանակ կրկնուսույցների և տվյալ առարկան դասավանդող ուսուցիչների տարբեր լինելու հանգամանքով առաջանում են մի շարք խոչընդոտներ: Անհամատեղելիության հիմնախնդիր է նաև դիտարկվում նույն ժամանակահատվածում առարկայի ուսումնառությունը և դպրոցում և կրկնուսույցի մոտ՝ տարբեր ծրագրերով, պահանջներով, բովանդակությամբ:

Հետաքրքիր է

Ստորև ներկայացվում են աշակերտների մասնակցությամբ ֆոկուս խմբային քննարկումների արդյունքում ներկայացված այն դիրքորոշումները, տեսակետերը, որոնցում արտացոլված է հետազոտության շրջանակում առաջ քաշված հիմնախնդիրների արդիականությունը: Աշակերտներին նախապես տեղեկացվել է հետազոտության ձայնագրման մասին, վերջիններս տվել են իրենց համաձայնությունը ներկայացնել իրենց ուղղակի մեջբերումները սույն հետազոտության շրջանակներում:

«Ավագ դպրոցում բնագիտական հոսք չբացվեց աշակերտների քչության պատճառով, և մեզանից երեք, ովքեր որոշել էինք ընտրել բժշկական համալսարան, ստիպված եղանք փոխել մեր ընտրած մասնագիտությունը: Արդյունքում մեր դպրոցից ոչ մեկը բժշկական համալասարան չի դիմելու»

Աշակերտ, 12-րդ դասարան, իգ. /մարզ/

«Իրականում եթե այնպես լինի, ինչպես օրենքով է տրված, այդպես օգտագործվի ժամանակը, դրական է: Բայց ամեն դեպքում դեռ կա կրկնուսույցին դիմելու այդ մեր սովորությունը: Եթե դա էլ վերանար ու դպրոցում սովորեցնեին *այնպես, ինչպես կրկնուսույցի մոտ,* ավելի լավ կլիներ»

Աշակերտ, 12-րդ դասարան, ար. /Երևան/

«Միանշանակ իր սխալ կողմերն ունի. ուշադրություն ենք դարձնում 3 առարկայի վրա ու մոռանում մյուս առարկաների մասին: Երբ խոսում ենք մեր ավագների հետ, հասկանում ենք, որ իրենց ժամանակ սովորել են տարբեր առարկաներ, ունեն գիտելիքներ ու գաղափար բոլոր առարկաներից ու բնագավառներից, իսկ մենք միայն ուժեղ անում ենք 3 առարկաներից: Դա սխալ է»

Աշակերտ, 12-րդ դասարան, ար. /Երևան/

«Մերոնք (հ. ծնողները) վճարում են ամեն դեպքում, բայց լավ կլիներ՝ դպրոցը լիներ միայն ու կրնուսուցմանը չդիմեինք: Իհարկե ինձ դպրոցը շատ բան է տվել, բայց դժվար է դպրոցի հետ համատեղել կրկնուսուցումը: Դժվար է՝ բոլոր առումներով: Կրթության որակ ինչ որ չափով բարձրացել է, բայց կենտրոնացել է մի տեղ»

Աշակերտ, 12-րդ դասարան, իգ. /մարզ/

12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ /3 առարկայի ընտրություն/ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԱՅԻՆ, ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 12-րդ դասարանի ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգով պայմանավորված աշակերտները հիմնականում ընտրում են ավարտական և միասնական քննություններին համապատասխան առարկաներ, հետազոտության շրջանակում հետաքրքրական էր նաև այն մոտեցումը, թե ինչ անդրադարձ կարող է ունենալ այս ընթացակարգային մոտեցումը, ըստ հետազոտության

մասնակիցների, կրթության գործընթացում ուսումնառողների վերաբերմունքային, մոտիվացիոն համակարգի վրա։

	Բարձրացել է	Փոփոխության չի ենթարկվել	Նվազել է
Ուսումնական մոտիվացիա	53,1%	44.3%	2.6%
Կրթության նկատմամբ դրական վերաբերմունք	61,5%	8%	30,5%

Ըստ հարցվող ուսանողների՝ 12-րդ դասարանի ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգի ազդեցությունը կրթության նկատմամբ մոտիվացիայի, դրական վերաբերմունքի վրա

Դեպի դրական	Չի փոխվել	Դեպի բացասական
(35,8%)	(39%)	(25,2%)

Ըստ հարցվող ուսանողների՝ 12-րդ դասարանի ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգի ազդեցությունը ոչ քննական առարկաների նկատմամբ վերաբերմունք

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ քաղաքականության որդեգրման նման մոտեցումը կարող է խնդրային լինել կրթության արժեհամակարգային կառուցակարգերի, այն է՝ ուսումնական մոտիվացիայի, վերաբերունքի վրա՝ թողնելով բացասական ազդեցություն։ Հետազոտության մասնակից աշակերտները ևս, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացքում շեշտադրում էին կատարում գործընթացի կազմակերպման առավել մեխանիկական, «ձևական» բնույթին, առկա սահմանափակումներին, ինչը, ըստ աշակերտների, հիմնականում բացասական անդրադարձ է ունենում ինչպես ուսումնական գործընթացի, այնպես էլ ուսումնական մոտիվացիայի, կրթության նկատմամբ դրական վերաբերմունքի, ոչ քննական առարկաներ նկատմամբ վերաբերմունքի վրա։

Եզրակացություն: Հանրակրթական ուսումնական հաստատություններում 12-րդ դասարանի ուսումնական գործընթացի կազմակերպման, մասնավորապես, սովորողի կողմից երկրորդ կիսամյակում առարկաների ընտրության ընթացակարգը(սահմանված Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլաններով) ամբողջությամբ չի ծառայում իր նպատակին, այն է՝ նախապատրաստումը ավարտական, այդ թվում՝ միասնական քննություններին, ինչի արդյունքում էլ չի նպաստում կրկնուսույցների դերի նվազեցմանը։

Ավելին, գործընթացի կազմակերպման նման պրակտիկան առաջացնում է մի շարք դժվարություններ ու հիմնախնդիրներ՝ կապված առարկաների սահմանափակ ընտրության հնարավորության, նախատեսված ժամանակահատվածի ոչ բավարար լինելու, աշակերտների փոխարեն առարկաների ընտրության, տարբեր կրթական կարիքներ ունեցող աշակերտներին միևնույն բովանդակությամբ առարկաների ուսուցման, խմբերի կազմակերպման, կրթության, ոչ քննական առարկաների նկատմամբ

բացասական վերաբերմունքի պրակտիկայի տարածմանը և մի շարք այլ հիմնախնդիրներ։

Առաջարկություն։ «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլաններով» սահմանված 20-րդ բաժնի (Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում) հիմադրույթներում կատարել համապատասխան փոփոխություններ, վերնոշյալ դժվարություններն ու խոչընդոտները հաղթահարելու նպատակով՝ ներառելով հետևյալ դրույթները, որոնք ուղղված են 12-րդ դասարանի ուսումնական գործընթացի կազմակերպման բարելավմանը։ Մասնավորապես,

- Ավարտական և միասնական քննություններին արդյունավետ նախապատրաստման, կրկնուսույցների դերի նվազեցման նպատակով 12-րդ դասարանում 3 առարկաների ընտրության, ուսուցման կազմակերպման գործընթացի մեկնարկային ժամանակահատված համարել համապատասխան ուսումնական տարվա սկիզբը՝ սեպտեմբերը։ Այդկերպ նախորդ ուսումնական տարում (11-րդ դասարանում) ավարտել ուսումնական պլանով նախատեսված առարկաների ուսումնասիրությունը՝ հնարավորություն ստեղծելով առավել երկար ուսումնասիրել աշակերտի կողմից ընտրված առարկան, պատրաստվել ավարտական քննությունների՝ նվազեցնելով կրկնուսույցների ինստիտուտի դերը։
- Սահմանել առարկաների ընտրության առավել ճկուն համակարգ (3 և ավելի առարկաներ, ըստ աշակերտի ընտրության), որը հնարավորություն կտա աշակերտներին կատարել առարկաների առավել ազատ ընտրություն՝ չստեղծելով արհեստական այնպիսի խոչընդոտներ, ինչպիսիք են՝ աշակերտների փոխարեն առարկայի ընտրությունը, խմբերի թվաքանակով պայմանավորված փոքր խմբերի բացառումը և աշակերտների միացումը այլ խմբերի և այլն։
- Ներդնել սովորողների կողմից առարկաների ընտրության, դասավանդողների դասաժամերի բաշխման, դասացուցակի ճկուն կազմման այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան անգամ 1 աշակերտի կողմից առարկայի ընտրության դեպքում ապահովել առարկայի ուսուցման պատշաճ կազմակերպումը այդ աշակերտի համար։
- Ստեղծել հնարավոր այլ մեխանիզմներ ոչ միասնական քննություններ հանձնող աշակերտներին (հիմնականում արվեստի, մշակույթի և սպորտի ուղղվածության մասնագիտության ընտրության կատարած աշակերտներ) ներբուհական ընդունելության քննություններին աջակցելու նպատակով։

ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ: Հետազոտության շրջանակում թիրախ խմբում աշակերտների և ուսանողների ընդգրկումը հնարավորության է ընձեռել հիմնախնդիրը դիտարկել միառժամանակ երկու կողմից՝ և գործընթացքային, և վերջնարդյունքային համատեքստում: Այս պարագայում առկա է հնարավորություն փորձելու գնահատել ավագ դպրոցի ակնկալվող արդյունքների (մասնագիտական կողմնորոշում, ինքնուրույն կյանք վարելու պատրաստվածության հմտությունների ձեռքբերում, հետագա ուսումնառության հաջողություն) ձեռքբերման ուղղված գործընթացի իրականացման պրակտիկան, քանի որ աշակերտները արդեն ավարտում էին դպրոցը և լավագույնս կարող էին ներկայացնել, թե տվյալ պահին ինչ աշխատանքներ են իրականացվում այդ ուղղությամբ, իսկ ուսանողները կարող էին գնահատել իրականացված/կամ չիրականացված/ աշխատանքների ազդեցությունը:

Մասնավորապես, ՀՀ կառավարության 2008թ. մարտի 27-ի թիվ 12 արձանագրային որոշմամբ հաստատված «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրով»[5] նախանշվում են ավագ դպրոցների ներդրման արդյունքում երեք հիմնական ակնկալվող արդյունքներ, այն է,

- ըստ ընդունակությունների և կարողությունների սովորողների մասնագիտական(նախամասնագիտական) կողմնորոշումը,
- սովորողներին ինքնուրույն կյանքին նախապատրաստելը,
- հետագա մասնագիտական կրթություն ստանալու համար բավարար հիմքերի ստեղծումը:

Սույն ակնկալվող արդյունքներից վերջին երկուսի ստեղծման համար քաղաքականության մակարդակում չկան սահմանված հստակ մեխանիզմներ, քանի որ վերջիններս ուսումնական գործընթացի տարբեր բաղադրիչների արդյունքում ձևավորող, համընդհանուր բնույթ ունեցող, ընդհանուր գործողությունների, միջառարկայական մոտեցումների, դպրոցի ուսումնական միջավայրի, կրթության բովանդակության արդյունքում ձեռքբերվող ակնկալվող արդյունքներն են: Մյուս կողմից, մասնագիտական կողմնորշմանն ուղղված աշխատանքների կարևորությունը արձանագրված է ՀՀ կրթության քաղաքականության մի շարք փաստաթղթերում: Մասնավորապես, Ազգային ժողովի կողմից 1999թ.-ի ապրիլի 14-ին ընդունված «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 4-ի կետ 2-ում նշվում է[6]. «Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը *մասնագիտական պատշաճ պատրաստվածություն* ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է»: Ըստ նույն օրենքի, հոդված 18-ի 1-ին կետի՝ «Հանրակրթության նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացումն է, անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը, *մասնագիտական կողմնորոշումը,* նրան ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթությանը նախապատրաստելը:» Այս կետում, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առաջին անգամ նշվում է

---

[5] http://www.irtek.am/views/act.aspx?aid=43290

[6] «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 1999թ.

մասնագիտական կողմնորոշում հասկացությունը, ինչպես նաև մասնագիտական կրթությանը նախապատրաստվել եզրույթը։ Հանրակրթության ոլորտը կարգավորող մյուս կարևորագույն փաստաթուղթը 2009թ-ի հուլիսի 10-ին ընդունված «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն է[7], որի հոդված 4-ի 2-րդ կետով սահմանվում է՝ «Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և *մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն* է:» Օրենքում Հանրակրթության նպատակների և պետական քաղաքականության սկզբունքների (հոդված 5) առաջին կետով սահմանվում է, որ. 1. Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի՝ 5)մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը։

Հատկանշանական է, որ «Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրում»՝ մշակված Հայաստանի Հանրապետության նախագահի 2007թ.-ի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՆՀ-37-Ն հրամանագրի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1207-Ն որոշման հիմնադրույթներին համապատասխան, 2-րդ գլխի (կրթության համակարգի առկա վիճակը եվ հիմնախնդիրները) 2.5. ենթագլխի (Ամփոփում) 70-րդ կետի (կրթության ոլորտի ներկա փուլի առավել ընդգծված հիմնախնդիրներ) 7-րդ ենթակետում նշվում է.

7) կրթական ծրագրերում գերակշռում է սովորողների տեսական պատրաստվածությունը, շրջանավարտները չունեն կյանքի և մասնագիտական գործունեության համար բավարար կիրառական կարողություններ ու հմտություններ, արդյունավետ մասնագիտական կողմնորոշում[8]։

Սույնով կրթության քաղաքականության մի շարք հիմնարար փաստաթղթերում ավագ դպրոցների ներդրման ծրագրի ակնկալվող արդյունքների ձեռքբերմանն ուղղված աշխատանքները դառնում են անհրաժեշտություն։

Ելնելով վերոնշյալից՝ հետազոտության շրջանակում փորձ է արվել նաև ուսումնասիրելու, թե ինչպիսի՞ն է ավագ դպրոցում ակնկալվող արդյունքների ձեռքբերման ուղղված գործընթացի իրականացման պրակտիկան (հետագա ուսումնառության հաջողություն, մասնագիտական կողմնորոշում, ինքնուրույն կյանք վարելու պատրաստվածության հմտությունների ձեռքբերում), և ինչ աշխատանքներ են իրականացվում այդ ուղղությամբ։ Հարկավոր է նաև շեշտադրել այն հանգամանքը, որ ակնկալվող արդյունքների ձեռքբերման ուղղված աշխատանքների ոչ բավարար իրականացումը ևս կարող է հանդիսանալ հանրակրթությունից բարձրագույն կրթության անցումային շրջանի դժվարություններ ու հիմնախնդիրներ։

---

[7] «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2009թ.

[8] Կրթության զարգացման պետական ծրագիր 2011-2015թթ։ 2007թ. փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՆՀ-37-Ն հրամանագրի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1207-Ն որոշման հիմնադրույթներին համապատասխան

ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Հետազոտության ուսանողների հետ հարցման արդյունքում փորձ է արվել բացահայտելու, թե ըստ հետազոտության մասնակիցների, ինչպիսի ազդեցություն է ունեցել ավագ դպրոցի ուսումնառությունը հետագա ուսումնառության, այս պարագայում բուհական կրթության նախապատրաստման, բուհում ադապտացիայի գործընթացի վրա: Արդյունքում՝

Նշել, թե, ըստ Ձեզ, ի՞նչ ազդեցություն է ունեցել ավագ դպրոց (մասնավորապես 12-րդ դասարանը) հաճախումը բուհական կրթությանը նախապատրաստման գործընթացում (Ըստ ուսանողների)

1. Ամբողջապես դրական	2. Մասամբ դրական	3. Ազդեցություն չի ունեցել	4. Մասամբ բացասական	5. Ամբողջապես բացասական
28,1%	**45,7%**	**18,2%**	**8%**	**0**

Հետազոտության մասնակից ուսանողների մեծամասնությունը(45,7%)(55ուս.) նշել, որ ավագ դպրոցը նպաստել է բուհական կրթության նախապատրաստմանը: Միևնույն ժամանակ, մեկ այլ հարցադրման արդյունքում, թե «արդյոք ավագ դպրոցի 12-րդ դասարան հաճախումը նպաստել է, որ դուք շարունակեք կրթությունը բուհում» ուսանողների մեծամասնությունը ***69.8%-ը(84ուս.) պատասխանել է՝ ՈՉ:***



Այն հարցին, թե ինչ հստակ աշխատանքներ են իրականացվել այս ուղղությամբ, ովքեր են եղել դպրոցում հետագա ուսումնառության նպաստող աշխատանքների պատասխանատուները, համակարգողները, անմիջապես այդ աշխատանքները իրականացնողները՝ հարցվողների 56,9%-ը(68ուս.) պատասխանել է, որ նմանօրինակ աշխատանքներ իրականացվել են իրենց դպրոցներում, իսկ 17,6%-ը(21ուս.) նշել է, ընդհանրապես նման աշխատանքների բացակայության մասին: Նպատակ ունենալով նաև ուսումնասիրել ավագ դպրոցում (մասնավորապես 12-րդ դասարանում) իրականացվող աշխատանքների հնարավոր բովանդակությունը՝ ուղղված նախանշված ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը (այս պարագայում՝ հետագա ուսումնառության

հաջողություն)՝ փորձ է արվել նաև քարտեզագրելու, թե ում կողմից են իրականացվել աշխատանքներ, և հատկապես ինչ աշխատանքներ են իրականացվել՝ հետագա ուսումնառությանը նպաստելու նպատակով: Արդյունքում.

Ու՞մ կողմից են իրականացվել աշխատանքներ՝ ուղղված հետագա ուսումնառության հաջողությանը (%)



Ի՞նչ աշխատանքներ են իրականացվել ավագ դպրոցում հետագա ուսումնառության շարունակականությանը նպաստելու, խթանելու նպատակով.

- Դժվարանում եմ պատասխանել՝ 25,5%
- Չի անցկացվել ընդհանրապես՝ 17,6%
- Շտեմարաններով ուսուցում՝ 13,4%
- Կրկնուսույցի մոտ հաճախում՝ 10,1%
- Դասերի կրկնություն՝ 7,5%
- Քննություններին նախապատրաստում՝ 7,1%
- Մասնագիտության ճիշտ ընտրության ուղղորդում՝ 6,5%
- Ուսուցիչների կողմից իրականացվող խորհրդատվությունը՝ 3,9%
- Այց բուհ, ծանոթություն ծրագրերին՝ 3,9%
- Լրացուցիչ դասընթացներ և ինֆորմացիա՝2,6%
- Մոտիվացիայի բարձրացում՝1,9%

Եզրակացություն: Ավագ դպրոցներում սովորողների հետագա ուսումնառության հաջողությանը նպաստելու, աջակցելու գործողությունները չեն կրում համակարգային բնույթ և դրա հնարավոր կիրառման մեխանիզմները արտացոլված չեն քաղաքականության փաստաթղթերում: *Աշակերտների մասնակցությամբ ֆոկուս խմբային քննարկումների* ընթացքում անդրադարձ կատարելով հետագա ուսումնառության հաջողության ուղղված աշխատանքների, դրանց բովանդակության հիմնահարցին՝ աշակերտներին մեծամասնությունը չէր պատկերացնում, թե ինչ բովանդակությամբ աշխատանքներին մասին է խոսքը, որը հաստատվեց նաև ուսանողների հետ հարցման արդյունքում: Սա վկայում է մի կողմից աշխատանքների առհասարակ բացակայության մասին, մյուս կողմից՝ չի բացառվում, որ հետազոտության մասնակիցները կարող էին ունենալ, օրինակ, հետագա ուսումնառության հաջողության,

աշխատանքների իրականացման իրենց մոդելը, որը գործնականում բացակայում է: Մասնավորապես, չնայած նրան, որ հարցման մասնակից ուսանողների մեծամասնությունը նշել էր, թե ավագ դպրոցը նպաստել է հետագայում ուսումնառության հաջող ընթացքին, բուն գործողությունների և իրականացնողների նկարագրման արդյունքում ի հայտ եկած հակասություններն ու ոչ բովանդակային մեկնաբանությունները փաստում են, որ *նմանօրինակ աշխատանքների ընդհանուր նպատակը, բովանդակությունը, դրան ուղղված արդյունքների ձեռքբերումը լրացուցիչ մեկնաբանությունների, քաղաքականության համապատասխան փաստաթղթերում արտացոլման կարիք ունեն:*

Առաջարկություն: ՀՀ-ում Հանրակրթական ուսումնական հաստատությունների (մասնավորապես ավագ դպրոցների) գործունեությունը կարգավորող համապատասխան փաստաթղթերում (քաղաքականության մեջ) արտացոլել, նկարագրել, թե ինչ աշխատանքներ պետք է իրականացվեն ավագ դպրոցում՝ ուղղված հետագա ուսումնառության հաջողությանը, հստակորեն նախանշելով գործընթացի իրականացման պատասխանատուներին, գործողությունների ընդգրկման շրջանակը: Որպես օրինակ, դա կարող է արտացոլվել Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրերում:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: Հանրակրթական ուսումնական հաստատություններում, մասնավորապես, ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների համակարգի ներդման առնչությամբ ՀՀ-ում վերջին տարիներին իրականացվում եմ մի շարք աշխատանքներ, որոնց ներդման, կարգավորման մեխանիզմները արտացոլված և մեկնաբանված են կրթության քաղաքականության համապատասխան փաստաթղթերում: Այդ մասին է վկայում, օրինակ, 2012թ-ին Կառավարության (հոկտեմբերի 4-ի նիստի N 40 արձանագրային որոշման) կողմից ընդունված «ՀՀ մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման հայեցակարգ»-ը, որտեղ նախանշվում են ՀՀ-ում մասնագիտական կողմնորոշման իրականացման նպատակները, խնդիրները, սկզբունքները, հայեցակարգի իրականացման միջոցառումների ծրագիրը՝ նախատեսված 2012-2015թթ. ժամանակահատվածի համար: Հայեցակարգում ներկայացված է նաև «Հայաստանում մասնագիտական կողմնորոշման համակարգի առաջարկվող մոդելը», որի գործունության կիազակետում ավագ դպրոցն[9] է: Սակայն, մասնագիտական կողմնորոշման համակարգի, ծառայությունների հետ կապված դժվարությունների և հիմնախնդիրների պատճառ կարող է հանդիսանալ նաև այն հանգամանքը, որ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման քաղաքականությունն արտացոլող հիմնական փաստաթղթում նկարագրված չեն այն մեխանիզմները՝ շահագրգիռ կողմերի ներկայացուցչություն, գործառությունների նկարագրություն, գործունեության բովանդակություն և այլն, որոնք կարող էին նպաստել ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման համակարգի/ինստիտուտի/ կայացմանը:

Մասնավորապես, այն հարցին, թե արդյուք 12-րդ դասարանում իրականացվել են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներ, հետազոտության մասնակից ուսանողների *53,5%-ը պատասխանել է՝ այո, իսկ 46,5%-ը՝ ոչ:* Կարծիքների տարաբաշխման նման մոտեցումը վկայում է հանրակրթությունում մասնագիտական կողմնորոշման համակարգի անհամաչափ զարգացման մասին Ընդ որում, այստեղ պատկերը էական տարբեր է հատկապես Երևանում և մարզերում. մարզերում մասնագիտական կողմորոշման աշխատանքները շոշափելի հարթակում չեն, չկան համապատասխան պայմաններ, օրինակ, այս խնդրի ջատագովություն իրականացնող հասարակական կազմակերպություններ, թույլ է համագործակցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների, գործատուների հետ, որը հանգեցնում է գործընթացի անհամաչափ զարգացմանը: Այս համատեսքում նաև անհրաժեշտ է դպրոցների կարողությունների (նյութատեխնիկական, մասնագետների համար մեթոդապահովման) զարգացման դասընթացների պարբերական իրականացումը: Մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում կարևորագույն դեր ունեն հատկապես դպրոցները, սակայն հարցման մասնակից ուսանողների 26,9%-ի(32ուս.) կարծիքով դպրոցը ներդրում չի ունեցել իրենց հետագա մասնագիտական կողմնորոշման հարցում, իսկ հարցվողների 9,6%-ի(12ուս.) դժվարացել է նկարագրել մասնագիտական կողմնորոշմանն ուղղված ավագ դպրոցում իրականացվող որևէ աշխատանք:

[9] ՀՀ Մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման հայեցակարգ, 2012թ.

«Ի՞նչ աշխատանքներ են իրականացվել ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ(%)»
(ըստ ուսանողների)



Արդյո՞ք ավագ դպրոցի հաճախումը նպաստել է Ձեր մասնագիտության ընտրության վրա
(ըստ ուսանողների)

ՈՉ՝ չի նպաստել (59,7%)	ԱՅՈ՝ նպաստել է (40,3%)

Վերնոշյալից ակնհայտ է, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում (մասնավորապես ավագ դպրոցներում) մասնագիտական կողմնորոշման գործընթացը դեռևս սաղմնային փուլում է, և անհրաժեշտ է ներդնել համակարգային ծառայությունների ճկուն, մատչելի, մեթոդապես հիմնավորված համակարգ:

Աշակերտների մասնակցությամբ ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում անդրադարձ կատարելով ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների իրականացմանը՝ աշակերտները մասնագիտական կողմնորոշման աշխատանքների իրականացումը դիտարկում էին որպես կարևորագույն գործոն,անհրաժեշտություն ավագ դպրոցում: Միևնույն ժամանակ, մասնագիտական կողմնորոշման գործընթացում մասնագիտացած մասնագետների բացակայությունը, կողմորոշման ծառայությունների համակարգի անկատարությունը, ծնողների ու ուսուցիչների կողմից մասնագիտության ընտրության գործընթացում ուղղորդումները, ըստ աշակերտների, հանդես են գալիս որպես դժվարություններ և խոչընդոտներ հանրակրթությունից բարձրագույն կրթության անցումային շրջանում:

Եզրակացություն: ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման գործընթացում մասնագիտացած մասնագետների բացակայությունը, կողմորոշման ծառայությունների համակարգի անկատարությունը, ծնողների ու ուսուցիչների կողմից մասնագիտության ընտրության գործընթացում ուղղորդումները թույլ են տալիս գալ այն եզրահանգմանը, որ մասնագիտական կողմնորոշման համակարգը ՀՀ-ում զարգանում է անհամաչափ: Պատկերը էական տարբեր է հատկապես Երևանում և մարզերում. մասնավորապես, մարզերում մասնագիտական կողմորոշման աշխատանքները շոշափելի հարթակում չեն. չկան, օրինակ, այս խնդրի ջատագովություն իրականացնող հասարակական կազմակերպություններ, թույլ է համագործակցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների, գործատուների հետ, ինչը ևս հանդես են գալիս որպես դժվարություն և խոչընդոտ հանրակրթությունից բարձրագույն կրթության արդյունավետ անցման համար:

Առաջարկություն: Մասնագիտական կողմնորոշման գործընթացի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ներդնել մասնագիտական կողմնորոշման ծառայությունների/մոդելի/ համակարգ ՀՀ ողջ կրթական տարածքում՝ ապահովելով ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը կրթական տարբեր կարիքներ ունեցող, տարբեր սոցիալական խմբերին պատկանող ուսումնառողների համար: Այս համատեքստում կարևորագույն պայման է նաև դպրոցների կարողությունների (նյութատեխնիկական, մասնագետների համար մեթոդապահովման) զարգացման դասընթացների պարբերական իրականացումը: Միևնույն ժամանակ, քաղաքականության մեջ անհրաժեշտ է (ինչպես նախկին հայեցակարգը) ներդնել նոր հայեցակարգ, որը կծառայի որպես մեկ միասնական համակարգ՝ նախանշելով մասնագիտական կողմնորոշման աշխատանքների մեխանիզմներ, պատասխանատուներ: Հանրակրթական ուսումնական հաստատություններում (մասնավորապես ավագ դպրոցներում) մասնագիտական կողմնորոշման գործընթացը դեռևս սաղմնային փուլում է, և անհրաժեշտ է ներդնել համակարգային ծառայությունների ճկուն, մատչելի, մեթոդապես հիմնավորված համակարգ:

Ավագ դպրոցների ներդրման ծրագրի ակնկալվող արդյունքները կրթության քաղաքականության ընդհանուր համակարգում հանդիսանում են օրակարգային հիմնախնդիրներ, որոնք համապատասխանաբար որպես ՀՀ-ում առկա կրթական հիմնախնդիր, արտացոլված են ՀՀ կրթության քաղաքականության մի շարք փաստաթղթերում, հետևաբար անհրաժեշտ է իրականացնել գործողություններ, քարտեզագրել խնդիրների հաղթահարման հնարավոր ուղիներ առկա իրավիճակի բարելավման նպատակով:

Հարկավոր է նաև շեշտադրել այն հանգամանքը, որ սույն հետազոտության շրջանակում բացահայտված ավագ դպրոցի ակնկալվող արդյունքների ձեռքբերման ուղղված աշխատանքների ոչ բավարար իրականացումը հանդիսանում են հանրակրթությունից բարձրագույն կրթության անցումային շրջանի դժվարություններ ու հիմնախնդիրներ: Վերջիններիս (համապատասխան աշխատանքների) չիրականացումը կամ ոչ բավարար լինելը կարող են հանգեցնել մի շարք այլ հիմնախնդիրների, որոնք լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, հանրակրթությունից բարձրագույն կրթություն անցումային շրջանում առկա են մի շարք դժվարություններ և խոչընդոտներ՝ պայմանավորված ավագ դպրոցի, մասնավորապես, 12-րդ դասարանի ուսումնական գործընթացի կազմակերպման քաղաքականության հետ, որն ամրագրված է «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլաններում»: Հետազոտության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

- Հանրակրթական ուսումնական հաստատություններում 12-րդ դասարանի ուսումնական գործընթացի կազմակերպման, մասնավորապես, սովորողի կողմից երկրորդ կիսամյակում առարկաների ընտրության ընթացակարգը (սահմանված Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլաններով) ամբողջությամբ չի ծառայում իր նպատակին, այն է՝ նախապատրաստումը ավարտական, միասնական քննություններին, ինչի արդյունքում էլ չի նպաստում ավագ դպրոցների ներդրման հիմնական նպատակներից՝ կրկնուսույցների դերի նվազեցմանը: Ավելին՝ գործընթացի կազմակերպման նման պրակտիկան առաջացնում է մի շարք դժվարություններ ու հիմնախնդիրներ՝ կապված առարկաների սահմանափակ ընտրության հնարավորության, նախատեսված ժամանակահատվածի ոչ բավարար լինելու, աշակերտների փոխարեն առարկաների ընտրության, տարբեր կրթական կարիքներ ունեցող խումբ աշակերտներին միևնույն բովանդակությամբ առարկաների ուսուցման, խմբերի կազմակերպման, կրթության, ոչ քննական առարկաների նկատմամբ բացասական վերաբերմունքի պրակտիկայի տարածմանը և մի շարք այլ հիմնախնդիրներ:
- Ավագ դպրոցներում սովորողների հետագա ուսումնառության հաջողությանը նպաստելու, աջակցելու գործողությունները չեն կրում համակարգային բնույթ և դրա հնարավոր կիրառման մեխանիզմները արտացոլված չեն քաղաքականության փաստաթղթերում: *Աշակերտների մասնակցությամբ ֆոկուս խմբային քննարկումների* ընթացքում անդրադարձ կատարելով հետագա ուսումնառության հաջողության ուղղված աշխատանքների, դրանց բովանդակության հիմնահարցին՝ աշակերտներին մեծամասնությունը չէր պատկերացնում, թե ինչ բովանդակությամբ աշխատանքներին մասին է խոսքը, որը հաստատվեց նաև ուսանողների հետ հարցման արդյունքում: Սա վկայում է մի կողմից աշխատանքների առհասարակ բացակայության մասին, մյուս կողմից՝ չի բացառվում, որ հետազոտության մասնակիցները կարող էին ունենալ, օրինակ, հետագա ուսումնառության հաջողության, աշխատանքների իրականացման իրենց մոդելը, որը գործնականում բացակայում է: Մասնավորապես, չնայած նրան, որ հարցման մասնակից ուսանողների մեծամասնությունը նշել էր, թե ավագ դպրոցը նպաստել է հետագայում ուսումնառության հաջող ընթացքին, բուն գործողությունների և իրականացնողների նկարագրման արդյունքում ի հայտ

եկած հակասություններն ու ոչ բովանդակային մեկնաբանությունները փաստում են, որ *նմանօրինակ աշխատանքների ընդհանուր նպատակը, բովանդակությունը, դրան ուղղված արդյունքների ձեռքբերումը լրացուցիչ մեկնաբանությունների, քաղաքականության համապատասխան փաստաթղթերում արտացոլման կարիք ունեն:*

- ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման գործընթացում մասնագիտացած մասնագետների բացակայությունը, կողմորոշման ծառայությունների համակարգի անկատարությունը, ծնողների ու ուսուցիչների կողմից մասնագիտության ընտրության գործընթացում ուղղորդումները թույլ են տակլիս գալ այն եզրահանգմանը, որ մասնագիտական կողմնորոշման համակարգը ՀՀ-ում զարգանում է անհամաչափ: Պատկերը էական տարբեր է հատկապես Երևանում և մարզերում. մասնավորապես, մարզերում մասնագիտական կողմորոշման աշխատանքները շոշափելի հարթակում չեն. չկան, օրինակ, այս խնդրի ջատագովություն իրականացնող հասարակական կազմակերպություններ, թույլ է համագործակցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների, գործատուների հետ, ինչը ևս հանդես են գալիս որպես դժվարություն և խոչընդոտ հանրակրթությունից բարձրագույն կրթության արդյունավետ անցման համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.«Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլաններով» սահմանված 20-րդ բաժնի (Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում) հիմադրույթներում կատարել համապատասխան փոփոխություններ, վերնոշյալ դժվարություններն ու խոչընդոտները հաղթահարելու նպատակով՝ ներառելով հետևյալ դրույթները, որոնք ուղղված են 12-րդ դասարանի ուսումնական գործընթացի կազմակերպման բարելավմանը: Մասնավորապես,

- Ավարտական և միասնական քննություններին արդյունավետ նախապատրաստման, կրկնուսույցների դերի նվազեցման նպատակով 12-րդ դասարանում 3 առարկաների ընտրության, ուսուցման կազմակերպման գործընթացի մեկնարկային ժամանակահատված համարել համապատասխան ուսումնական տարվա սկիզբը՝ սեպտեմբերը: Այդկերպ նախորդ ուսումնական տարում (11-րդ դասարանում) ավարտել ուսումնական պլանով նախատեսված առարկաների ուսումնասիրությունը՝ հնարավորություն ստեղծելով առավել երկար ուսումնասիրել աշակերտի կողմից ընտրված առարկան, պատրաստվել ավարտական քննությունների՝ նվազեցնելով կրկնուսույցների ինստիտուտի դերը:
- Սահմանել առարկաների ընտրության առավել ճկուն համակարգ (3 և ավելի առարկաներ, ըստ աշակերտի ընտրության), որը հնարավորություն կտա աշակերտներին կատարել առարկաների առավել ազատ ընտրություն՝ չստեղծելով արհեստական այնպիսի խոչընդոտներ, ինչպիսիք են՝ աշակերտների փոխարեն

առարկայի ընտրությունը, խմբերի թվաքանակով պայմանավորված փոքր խմբերի բացառումը և աշակերտների միացումը այլ խմբերի և այլն։

- Ներդնել սովորողների կողմից առարկաների ընտրության, դասավանդողների դասաժամերի բաշխման, դասացուցակի ճկուն կազմման այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան անգամ 1 աշակերտի կողմից առարկայի ընտրության դեպքում ապահովել առարկայի ուսուցման պատշաճ կազմակերպումը այդ աշակերտի համար։
- Ստեղծել հնարավոր այլ մեխանիզմներ ոչ միասնական քննություններ հանձնող աշակերտներին (հիմնականում արվեստի, մշակույթի և սպորտի ուղղվածության մասնագիտության ընտրության կատարած աշակերտներ) ներբուհական ընդունելության քննություններին աջակցելու նպատակով։

2. ՀՀ-ում Հանրակրթական ուսումնական հաստատությունների (մասնավորապես ավագ դպրոցների) գործունեությունը կարգավորող համապատասխան փաստաթղթերում (քաղաքականության մեջ) արտացոլել, նկարագրել, թե ինչ աշխատանքներ պետք է իրականացվեն ավագ դպրոցում՝ ուղղված հետագա ուսումնառության հաջողությանը, հստակորեն նախանշելով գործընթացի իրականացման պատասխանատուներին, գործողությունների ընդգրկման շրջանակը։ Որպես օրինակ, դա կարող է արտացոլվել Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրերում։

3. Մասնագիտական կողմնորոշման գործընթացի արդյունավետ իրականացման համար մասնավորապես 12-ամյա կրթության քաղաքականության համատեքստում, անհրաժեշտ է ներդնել մասնագիտական կողմնորոշման ծառայությունների/մոդելի/ համակարգ ՀՀ ողջ կրթական տարածքում՝ ապահովելով ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը կրթական տարբեր կարիքներ ունեցող, տարբեր սոցիալական խմբերին պատկանող ուսումնառողների համար։ Այս համատեքստում կարևորագույն պայման է նաև դպրոցների կարողությունների (նյութատեխնիկական, մասնագետների համար մեթոդապահովման) զարգացման դասընթացների պարբերական իրականացումը։ Միևնույն ժամանակ, քաղաքականության մեջ անհրաժեշտ է (ինչպես նախկին հայեցակարգը) ներդնել նոր հայեցակարգ, որը կծառայի որպես մեկ միասնական համակարգ՝ նախանշելով մասնագիտական կողմնորոշման աշխատանքների մեխանիզմներ, պատասխանատուներ։ Հանրակրթական ուսումնական հաստատություններում (մասնավորապես ավագ դպրոցներում) մասնագիտական կողմնորոշման գործընթացը դեռևս սաղմնային փուլում է, և անհրաժեշտ է ներդնել համակարգային ծառայությունների ճկուն, մատչելի, մեթոդապես հիմնավորված համակարգ։

Հավելված: Հետազոտության գործիքներ

ՀԱՐՑԱԹԵՐԹ

(նախատեսված ուսանողների համար)

«Հանրակրթությունից բարձրագույն կրթության անցումային շրջանում դժվարությունների և հաղթահարման ուղիներ» ուսումնասիրություն

ԲՀՀ «Քաղաքականության կրթաթոշակներ» ծրագիր

Միշա Թադևոսյան mishavtadevosyan@gmail.com

Հարգելի մասնակից,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ այս հարցումը անանուն է:

Սույն հետազոտությունը իրականացվում է Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ:

1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1 Նշել բնակության վայրը/մարզ, քաղաք, գյուղ/ _____

1.2 Բուհի անվանումը _____, Բաժին,կուրս _____

1.3 Սեռ _____

1.4 Տարիք _____

1.5 Առաջադիմություն (միջին որակական գնահատական)

- բարձր (90-100 միավոր),
- միջին (70-ից 89 միավոր),
- ցածր (մինչ 69 միավոր),

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ

2. Նշել, թե, ըստ Ձեզ, ի՞նչ ազդեցություն է ունեցել ավագ դպրոց (մասնավորապես 12-րդ դասարանը) հաճախումը բուհական կրթությանը նախապատրաստման գործընթացում (համապատասխան վանդակում դնել V նշանը)

1. Ամբողջապես դրական	2. Մասամբ դրական	3. Ազդեցություն չի ունեցել	4. Մասամբ բացասական	5. Ամբողջապես բացասական

3. Գնահատել 1-ից 5 բալանոց սանդղակով, թե որքանով է ավագ դպրոցի (մասնավորապես 12-րդ դասարանի) հաճախումը նպաստել բուհում աղապտացիային. (համապատասխան վանդակում դնել V նշանը), (0-ից աճման կարգով)

1	2	3	4	5

4. Նշել, թե որքանով է 12-րդ դասարան հաճախումը նպաստել կրթության նկատմամբ մոտիվացիայի բարձրացմանը, դրական վերաբերմունքի ձևավորմանը (համապատասխան վանդակում դնել V նշանը)։

	Բարձրացել է	Փոփոխության չի ենթարկվել	Նվազել է
Կրթության նկատմամբ մոտիվացիա			
Կրթության նկատմամբ դրական վերաբերմունք			

5. Համաձայն եք արդյոք 12-րդ դասարանում 2-րդ կիսամյակի առարկաների բեռնաթափման (կրճատման) որոշման հետ.

☐ 1.այո

☐ 2.ոչ

Մեկնաբանել, թե ինչու _____

6. Ըստ Ձեզ, որն էր առարկաների բեռնաթափման (կրճատման) պատճառը/նպատակը (Նշել մեկից ավելի պատասխաններ՝ դասակարգելով ըստ կարևորության)

☐ 1.Աշակերտների ծանրաբեռնվածության թեթևացում

☐ 2.Կրկնուսույցի մոտ հաճախելիության նվազեցում

☐ 3.Պետական քննությունների նախապատրաստման աշխատանքների համար ազատ ժամանակի ավելացում

☐ 4.Նախամասնագիտական աշխատանքների իրականացում

☐ 5.Ինքնուրույն կյանք վարելու պատրաստվածության հմտությունների հաղորդում

☐ 6.Դեպի բուհ արդյունավետ անցում ապահովելու համար

☐ 7.այլ պատճառ (մեկնաբանել) _____

7. Նշել, թե ինչպես է փոխվել Ձեր վերաբերմունքը ոչ քննական առարկաների նկատմամբ առարկաների բեռնաթափման որոշման կայացումից հետո

1.Վերաբերմունքս փոխվել է Դեպի դրական	2.Վերաբերմունքս չի փոխվել	3.Վերաբերմունքս փոխվել է Դեպի բացասական

8. Գնահատել, թե, ըստ Ձեզ, որքանով է ավագ դպրոցը ներազդել հետևյալ բաղադրիչների զարգացմանը,

	1.Ամբողջությամբ նպաստել է	2.Մասամբ նպաստել է	3.Մասամբ չի նպաստել	4.Ամբողջությամբ չի նպաստել
Մասնագիտական կողմնորոշմանը				
Կրկնուսույցի դերի նվազեցմանը				
Հետագա ուսումնառության հաջող ընթացքին				
Ինքնուրույն կյանքի հմտությունների ձեռքբերմանը				

9. Նշել, թե ինչ հիմնական ուղղությամբ է «ծախսվել» ավագ դպրոցի 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակի ժամանակահատվածը

1. Պետական քննությունների նախապատրաստում/դպրոցում/
2. Պետական քննությունների նախապատրաստում/կրկնուսույցի մոտ/
3. Նախամասնագիտական աշխատանքների իրականացում
4. Աշխատանքներ՝ ուղղված ինքնուրույն կյանքի հմտությունների ձեռքբերմանը
5. Ազատ ժամանակ
6. Այլ (մեկնաբանել) _____

10. Գնահատել դպրոցի պատրաստվածության և մոտիվացիայի աստիճանը աշխատելու դպրոց-բուհ անցումային դժվարությունների հաղթահարման ուղղությամբ(համապատասխան վանդակում դնել V նշանը),

	1	2	3	4	5
Դպրոցի պատրաստակամության/մոտիվացիա/ աստիճանը					
Դպրոցի պատրաստվածության աստիճանը					

ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

11. Արդյոք ավագ դպրոցի 12-րդ դասարանում իրականացվել են աշխատանքներ, որոնք ուղղված էին բարձրագույն կրթության նախապատրաստմանը,

☐ 1.Այո
☐ 2.Ոչ (Բաց թողնել հաջորդ հարցը)
1.1 Նշել, թե ում կողմից՝ ծնողների, դպրոցի, այլ….._____

12. Թվարկել, թե ինչ աշխատանքներ են իրականացվել ավագ դպրոցի 12-րդ դասարանում՝ ուղղված բարձրագույն կրթության նախապատրաստմանը, արդյունավետ անցմանը.

1. _____

2. _____
3. _____

13. Արդյոք ավագ դպրոցի 12-րդ դասարանում իրականացվել են աշխատանքներ, որոնք ուղղված էին մասնագիտական կողմնորոշմանը,

☐ 1.Այո
☐ 2.Ոչ (Բաց թողնել հաջորդ հարցը)
1.1 Նշել, թե ում կողմից՝ ծնողների, դպրոցի, այլ….._____

14. Թվարկել, թե ինչ աշխատանքներ են իրականացվել ավագ դպրոցի 12-րդ դասարանում՝ մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ

1. _____
2. _____
3. _____

15. Արդյոք ավագ դպրոցի հաճախումը նպաստել է Ձեր մասնագիտության ընտրության վրա,

☐ 1. Այո
☐ 2. Ոչ
Մեկնաբանել, թե ինչու _____

16. Արդյոք ավագ դպրոցի 12-րդ դասարանում իրականացվել են աշխատանքներ, որոնք ուղղված էին ինքնուրույն կյանքի հմտությունների ձեռքբերմանը,

☐ Այո
☐ Ոչ (Բաց թողնել հաջորդ հարցը)
1.1 Նշել, թե ում կողմից՝ ծնողների, դպրոցի, այլ….._____

17. Թվարկել, թե ինչ աշխատանքներ են իրականացվել ավագ դպրոցի 12-րդ դասարանում՝ ուղղված ինքնուրույն կյանքի հմտությունների ձեռքբերմանը

1. _____
2. _____
3. _____

18. Արդյոք ավագ դպրոցի 12-րդ դասարան հաճախումը նպաստել է, որ դուք շարունակեք կրթությունը բուհում

☐ 1. Այո
☐ 2. Ոչ
Մեկնաբանել, թե ինչու _____

19. Հաճախել եք արդյոք կրկնուսույցի մոտ

☐ 1.Այո (Նշել, թե որքան ժամանակ _____)
☐ 2.Ոչ (Բաց թողնել հաջորդ հարցը)

20. Ըստ Ձեզ, արդյոք հնարավոր էր ստանալ միևնույն արդյունքները եթե չհաճախեիք կրկնուսույցի մոտ,

☐ 1. Այո
☐ 2. Ոչ (Նշել, թե ինչու _____)

21. Արդյոք ավագ դպրոցի 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակի 3 առարկաների ուսումնասիրումը բավարար էր ավարտական պետական քննություններ հանձնելու համար

☐ 1.Այո
☐ 2.Ոչ (Նշել, թե ինչու _____)

ՀԱՐՑԱՇԱՐ

(Նախատեսված Աշակերտների մասնակցությամբ
Ֆոկուս խմբային քննարկումների համար)

Ողջույնի խոսք:
Հարգելի աշակերտներ,
Շնորհակալություն հանդիպմանը մասնակցության համար: Այսօրվա հանդիպման թեման «Ավագ դպրոցի 12-րդ դասարանի ազդեցության առանձնահատկություններն են՝ մասնավորապես դպրոց-բուհ անցումային շրջանի դժվարությունները»: Հայտնում ենք Ձեզ, որ այս հանդիպումը ձայնագրվում է, սակայն պահպանվելու են Ձեր կողմից հնչած տեսակետների անանունությունը: Խնդրում ենք լինել հնարավորիս անկեղծ, և հայտնել Ձեր տեսակետները բաց և անկաշկանդ:

1. **Ըստ Ձեզ, որն է ավագ դպրոցի 12- րդ դասարանի 2-րդ կիսամյակում առարկաների բեռնաթափման պատճառը**
   1.1 Համաձայն էիք արդյոք այդ որոշման հետ/եթե ոչ, ապա ինչու/:
   1.2 Ինչ ազդեցություն է թողել նման մոտեցումը ձեր ուսումնական գործունեության վրա:/մոտիվացիայի անկում,կրթության նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն, ոչ քննական առարկաների նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն,/

2. **Ինչ աշխատանքներ են հիմնականում կատարվում 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում**
   2.1 Բուհական կրթության նախապատրաստում, նախամասնագիտական կողմնորոշման աշխատանքներ, ավարտական պետական քննությունների նախապատրաստում, աշխատանքներ՝ ուղղված արդյունավետ անցմանը դեպի բուհ, ինքնուրույն կյանքի հմտությունների ձեռքբերման ուղղված աշխատանքներ, և/կամ/ ազատ ժամանակի վատնում: /ում կողմից է իրականացվում՝ դպրոցի, ծնողների/

3. **Ինչպես կգնահատեք 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակի մոտեցման ազդեցությունը/ավարտական 3 առարկաների ուսումնասիրում/:**
   3.1 Դրական էր, թե բացասական: Ազատ ժամանակի ավելացում, կրկնուսույցի դերի նվազում, քննությունների նախապատրաստմանը հնարավորության ստեղծում, /Արդյոք փոփոխություն է տեղի ունեցել կրկնուսույցի մոտ հաճախությունը/

4. **Ինչ հիմնախնդիրներ կառանձնացնենք 12-ամյա համակարգում ուսուցման վերաբերյալ/ դժվարություններ, խոչընդոտներ/:**
   4.1 Ինչպիսի այլ մոտեցում դուք կնախընտրեիք, առաջարկություններ՝ նշված խնդիրների լուծման և /կամ/ առկա իրավիճակի բարելավման: